AMCA

Արբիտրաժի
և հաշտարարության
հայաստանյան կենտրոն

ԱՐԲԻՏՐՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

- Երևան 2024 -

Ընդունվել է

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի

Արբիտրաժային խորհրդի՝ 21.02.2024թ. № 2 որոշմամբ

ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐԲԻՏՐՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

- 2024 -

ԱՐԲԻՏՐՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Հոդված 1. Վարքագծի կանոնագրքի ընդունումը

1. Արբիտրը, ով ընդունել է «Արբիտրաժի և հաշտարարության հայաստան կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ AMCA) կողմից վարվող արբիտրաժային գործով որպես արբիտր հանդես գալու առաջարկը պետք է գործի AMCA-ի Արբիտրաժային Կանոնների և Արբիտրի վարքագծի սույն կանոնագրքի համաձայն (այսուհետ՝ Կանոնագիրք):
2. Սույն Կանոնագիրքը պետք է անալոգիայով կիրառվի AMCA-ի կողմից վարվող արբիտրաժային վարույթներով նշանակված փորձագետների նկատմամբ:

Հոդված 2. Ձեռնհասությունը

1. Որպես արբիտր հանդես գալու առաջարկն ընդունելիս, արբիտրը, որքանով, որ իրեն է հայտնի, պետք է կարողանա անհրաժեշտ ձեռնհասությամբ իրականացնել վեճի առարկայի և գործի վարման առնչությամբ իր գործառույթները:

Հոդված 3. Հասանելիությունը

1. Որպես արբիտր հանդես գալու առաջարկն ընդունելիս, արբիտրը, որքանով, որ իրեն է հայտնի, պետք է կարողանա անհրաժեշտ ժամանակ և ուշադրություն հատկացնել արբիտրաժային գործին, որպեսզի հնարավորինս արագ, ջանասիրաբար և արդյունավետորեն իրականացնի և ավարտի իր գործառույթները:

Հոդված 4. Անկողմնակալությունը և անկախությունը

1. Որպես արբիտր հանդես գալու առաջարկն ընդունելիս, արբիտրը, որքանով, որ իրեն է հայտնի, պետք է կարողանա իր գործառույթներն իրականացնել անհրաժեշտ անկողմնակալությամբ՝ հիմք ընդունելով վեճի լուծման այն գործառույթը, որը նա ստանձնել է բոլոր կողմերի շահերի համար:
2. Որպես արբիտր հանդես գալու առաջարկն ընդունելիս, արբիտրը պետք է, որքանով, որ իրեն է հայտնի, լինի անկախ:

3. Արբիտրը պետք է մնա անկողմնակալ և անկախ արբիտրաժային վարույթի ողջ ընթացքում:

Հոդված 5. Ընդունման, հասանելիության, անկողմնակալության և անկախության մասին հայտարարությունը

1. Մինչև նշանակումը կամ հաստատումը արբիտրը պետք է ստորագրի ընդունման, հասանելիության, անկողմնակալության և անկախության մասին հայտարարությունը:
2. Ապագա արբիտրները կամ արբիտրները պետք է գրավոր ձևով AMCA-ի Քարտուղարությանը և կողմերին բացահայտեն ցանկացած փաստի կամ հանգամանքի մասին, որը կողմերի տեսանկյունից կարող է կասկածի տակ դնել արբիտրի անկախությունը, ինչպես նաև ցանկացած հանգամանքի մասին, որը կարող է ողջամիտ կասկած առաջացնել արբիտրի անկողմնակալության վերաբերյալ:
3. Որևէ փաստի, հանգամանքի և հարաբերության բացահայտման առնչությամբ կասկած առաջանալու դեպքում, հարցը պետք է լուծվի բացահայտմամբ:
4. Այն դեպքում, երբ փաստերը, հանգամանքները և հարաբերությունները, որոնք պետք է ներկայացվեին, բացահայտվում են, Արբիտրաժային խորհուրդը կարող է այդ փաստը դիտարկել որպես արբիտրի փոխարինման կամ այլ արբիտրաժային գործերով վերջինիս թեկնածությունը չհաստատելու հիմք:
5. Բացահայտելու պարտականությունը շարունակական է և գործում է մինչև արբիտրաժային վարույթի ավարտը:

Հոդված 6. Ex parte հաղորդակցությունը

1. Արբիտրները և ապագա արբիտրները չպետք է ներգրավվեն և պետք է ձեռնպահ մնան կողմերի կամ նրանց ներկայացուցիչների հետ գործի հետ կապված ցանկացած *ex parte* հաղորդակցությունից, բացառությամբ, երբ նախքան առաջադրումը, անհրաժեշտ է քննարկել գործի ընդհանուր բնութագիրը և ապագա արբիտրի որակավորումը, փորձառությունը կամ մասնագիտացումը, ինչպես նաև ապագա արբիտրի անաչառությունը, անկախությունը և հասանելիությունը:

2. Արբիտրները կարող են *ex parte* շփվել կողմերի կամ կողմերի ներկայացուցիչների հետ արբիտրաժային տրիբունալի նախագահի ընտրության նպատակով:
3. Բոլոր *ex parte* շփումներում արբիտրը կամ ապագա արբիտրը պետք է ձեռնպահ մնա վեճի էության վերաբերյալ որևէ դիրքորոշում հայտնելուց:

Հոդված 7. Վարույթի իրականացումը

1. Արբիտրը պետք է նպաստի վարույթի բազմակողմանի և արագ իրականացմանը: Մասնավորապես, արբիտրը պետք է լսումների իրականացման ձևը և օրը որոշի այնպես, որ երաշխավորվի բոլոր կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունքի իրացումը և ապահովվի պատշաճ ընթացակարգին վերաբերող նորմերը:

Հոդված 8. Հաշտությունը

1. Արբիտրը կարող է բոլոր փուլերում կողմերին առաջարկել հաշտության, հաշտարարության կամ բանակցությունների հնարավորություն:
2. Աբիտրը չի կարող վարել հաշտությանն ուղղված քննարկումները կամ հանդես գալ որպես հաշտարար:

Հոդված 9. Խորհրդակցությունները

1. Արբիտրաժային տրիբունալի խորհրդակցությունները պետք է լինեն փակ:
2. Արբիտրը պետք է ձեռնպահ մնա ցանկացած ոչ համագործակցային և գործընթացը խաթարող վարքագծից և անմիջապես մասնակցի խորհրդակցություններին:

Հոդված 10. Վճարները և ծախսերը

1. Արբիտրը չպետք է որևէ կողմի կամ նրանց ներկայացուցիչների հետ ունենա կամ ձեռք բերի ուղղակի կամ անուղղակի պայմանավորվածություններ վճարների կամ ծախսերի վերաբերյալ:

2. Արբիտրը պետք է ստանա վարձատրություն և ծախսերի հատուցում, որը որոշվում է բացառապես AMCA-ի կողմից՝ հիմք ընդունելով Արբիտրաժային կանոններում նախատեսված վճարման սանդղակը, որը համարվում է արբիտրի կողմից հաստատված որպես արբիտր հանդես գալու առաջարկն ընդունելիս:
3. Արբիտրը պետք է խուսափի ոչ ողջամիտ և անհիմն ծախսերից, որոնք կարող են անհիմն ձևով մեծացնել վարույթի հետ կապված ծախսերը:

Հոդված 11. Կանոնագրքի խախտում

1. Արբիտրը, ով չի գործում սույն Կանոնագրքին համապատասխան կարող է փոխարինվել Արբիտրաժային խորհրդի կողմից: